



**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ**

18 հոկտեմբերի 2021 թվականի թիվ 160-Ա

ք. Երևան

**ՈՉ ԳԾԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 7-րդ մասի և 53-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է.**

Սահմանել՝

1. Ոչ գծային Հեռարձակողների կողմից առանց լիցենզավորման տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն իրականացնելու թույլտվություն ստանալու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահին, այն ոչ գծային Հեռարձակողները, որոնք իրականացնում են առանց լիցենզավորման տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն, թույլատրող որոշում ստանալու համար հայտերը ներկայացնում են սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**S. ՀԱԿՈԲՅԱՆ**

18 հոկտեմբերի 2021թ.  
ք. Երևան

**Հավելված N 1**  
**Հաստատված է**  
*Հեռուստատեսության և ռադիոյի*  
*հանձնաժողովի 2021 թվականի*  
*հոկտեմբերի 18-ի թիվ 160-Ս որոշմամբ*

**ԿԱՐԳ**

**ՈՉ ԳԾԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ  
ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ  
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով սահմանվում է ոչ գծային Հեռարձակողների կողմից առանց լիցենզավորման տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն իրականացնելու թույլտվություն ստանալու ընթացակարգը և կարգավորում է ոչ գծային տեսալսողական տեղեկատվության վերաբերյալ գործունեությունը թույլատրող որոշում ստանալու համար հայտերի ներկայացման հետ կապված հարաբերությունները:

2. Առանց լիցենզավորման տեսալսողական տեղեկատվության հեռարձակում են իրականացնում ոչ գծային Հեռարձակողները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության և սույն կարգի համաձայն գործունեությունը թույլատրող որոշումը ստանալուց հետո:

3. Ոչ գծային Հեռարձակողները ոչ գծային տեսալսողական տեղեկատվությունը տարածող Հեռարձակողները կամ օպերատորներն են:

4. Հանձնաժողովի՝ գործունեությունը թույլատրող որոշումը ստանալուց հետո ոչ գծային Հեռարձակողները կարող են պայմանագրային հիմունքներով գործունեություն իրականացնել ցանցային օպերատորների և այլ հաղորդակցության ցանցերով:

5. Առանց լիցենզավորման տեսալսողական տեղեկատվության հեռարձակման կազմակերպումը չպետք է ազդի տվյալ շրջանում գործող Հեռարձակողների իրականացման որակի վրա, ինչպես նաև չպետք է խաթարի տեսալսողական տեղեկատվություն ընդունող և հեռարձակող հեռահաղորդակցության տեխնիկական միջոցների աշխատանքը:

6. Արգելվում է ոչ գծային տեղեկատվության դեպքում տեսալսողական ծրագիրը կամ դրա մասն առանց դրանց հեղինակային կամ հարակից իրավունքի սուբյեկտ չհանդիսացող իրավատերերի համաձայնության տարածելը:

**2. ՈՉ ԳԾԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ  
ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ  
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԵՐԻ  
ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

7. Ոչ գծային Հեռարձակողները, որոնք մտադիր են մատուցել ոչ գծային տեսալսողական գործունեություն, պարտավոր են այն իրականացնելուց առաջ Հանձնաժողով ներկայացնել հայտ (համաձայն Ձև՝ 1), որում նշվում են՝

- 1) հայտատուի անվանումը.
- 2) իրավաբանական անձի պետական գրանցման համարը, իսկ ֆիզիկական անձի համար՝ հաշվառման համարը.
- 3) իրավաբանական անձի գտնվելու վայրը, իսկ ֆիզիկական անձի համար՝ հաշվառման վայրը.
- 4) հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն.
- 5) ոչ գծային տեսալսողական մեդիածառայության տեսակը.
- 6) օգտագործվող էլեկտրոնային հաղորդակցության ցանցը.
- 7) սփռման տարածքը.
- 8) ոչ գծային տեսալսողական տեղեկատվության հասանելիության պայմանները.
- 9) գործունեության մեկնարկի ենթադրյալ ամսաթիվը.
- 10) հայտը ներկայացնելու ժամանակաթիվը.
- 11) հայտատուի ստորագրությունը:

8. Հայտում սխալներ, ջնջումներ, վրիպակներ հայտնաբերելու դեպքում Հանձնաժողովը դրանք ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, հայտատուին այդ մասին պատշաճ կերպով տեղեկացնում է դրանք շտկելու նպատակով: Հայտատուն իրավունք ունի սույն մասում նշված ծանուցումը ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, Հանձնաժողով ներկայացնել նոր հայտ՝ առանց սույն մասում նշված թերությունների:

**3. ՈՉ ԳԾԱՅԻՆ ՀԵՌԱՐԶԱԿՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ  
ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՐԶԱԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ  
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՐՈՂ ՈՐՈՇՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՅՏԵՐԻ ՔՆԱՐԿՈՒՄԸ  
ԵՎ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

9. Հայտը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովը հայտ ներկայացնողին տալիս է առանց լիցենզավորման տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն իրականացնելու թույլատրող որոշում: Այս ժամկետը կարող է երկարացվել ոչ ավելի, քան 10 աշխատանքային օրով՝ թերի ծանուցման դեպքում:

10. Ոչ գծային Հեռարձակողները պարտավոր են Հանձնաժողովին տեղեկացնել հայտում նշված 7-րդ կետի 2)-ից 9)-ը ենթակետերի տեղեկություններում որևէ փոփոխության առաջացման օրվանից 30 օրվա ընթացքում:

11. Տրված թույլտվությունները գրանցվում են Հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանման կողմից՝ թույլտվությունների հաշվառման մատյանում:

Հեռուստատեսության և ռադիոյի  
հանձնաժողովի նախագահ  
\_\_\_\_\_ին  
(անուն, ազգանուն)

**Հ Ա Յ Տ**

**Ոչ գծային տեսալսողական տեղեկատվության վերաբերյալ գործունեությունը  
թույլատրող որոշում ստանալու համար**

\_\_\_\_\_  
*Հայտատուի անվանումը*

\_\_\_\_\_  
*Գտնվելու/հաշվառման վայրը*

\_\_\_\_\_  
*Պետական գրանցման/հաշվառման համարը*

\_\_\_\_\_  
*Հեռախոսահամարը, էլ. փոստի հասցեն*

\_\_\_\_\_  
*Ոչ գծային տեսալսողական մեդիաձառայության տեսակը*

\_\_\_\_\_  
*Օգտագործվող էլեկտրոնային հաղորդակցության ցանցը*

\_\_\_\_\_  
*Միջման տարածքը*

\_\_\_\_\_  
*Ոչ գծային տեսալսողական տեղեկատվության հասանելիության պայմանները*

\_\_\_\_\_  
*Գործունեության մեկնարկի ենթադրյալ ամսաթիվը \**

Կից փաստաթղթեր՝ \_\_\_\_\_ թերթ:

Հայտատու

\_\_\_\_\_ (անուն, ազգանուն)

\_\_\_\_\_ (ստորագրություն)

\_\_\_\_\_ (օրը, ամիսը, տարեթիվը)

Կ.Տ. (կնիքի առկայության դեպքում)

\* Այն ոչ գծային Հեռարձակողները, որոնք մինչև այս որոշումն ուժի մեջ մտնելու պահը իրականացնում են առանց լիցենզավորման տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն, այս կետը չեն լրացնում